

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Ք Ի Ր

Ամեն օր կ'ըրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պոյիս բաժանորդ ըլլալ ուղողը մէկ արձաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրշ, դարձեալ 100 թուոց համար , թղթատարութեան ծախքէ ադատ ըլլալով : — Մանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Արագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Առաւուրիչ եկեղեցւոց փարի դրանը կից Տոր Գրատունը :

### Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Ուրախութեամբ լսեցինք որ հըրաժարեալ պատրիարք Թագթագեան Պօղոս սրբազանին կոյսերական բարեխնամ կառավարութիւնը բարեհաճեր է ամուսկան հինգ հազար զուրուշ կապել ցկեանս :

Այս առաջին անդամն է որ բարեխնամ կառավարութիւնը այսչափ կարճ միջոցի մէջ այսչափ դուստր մը ինքնայորդ որ կը նուիրէ հրաժարեալ Հայ պատրիարքի մը, առանց Պատրիարքարանի միջնորդութեան և թախանձանայ, գրեթէ մէկուկէս ամիս միջոցի մէջ :

Եթէ Պօղոս սրբազանը մինչև այս հասակը պատրիարքական իշխանութեանէն խոյս տուած էր կամ թէ զըրկուած էր. և եթէ վերջին անգամ յախանայից ընդունեց, և մեր ազգին սովորութեանը համաձայն՝ առջի օրը « ավաննա » հետևեալ օրը « իխաչ հան զդա » լսելով զըջաց, գտնէ այժմ մեթիթարուելու է այս մեծ վարձատրութեանը վրայ, որ ի հարկէ առանց պատրիարք ըլլալու չպիտի ընդունէր, զոր իր պատրիարքութեան

միջոցին ալ թէև կ'ըստանար, բայց հազարումէկ տանջանքներով և դժուարութիւններով : Կը յուսանք որ իր ալևոր հատակին մէջ վերջին անգամ կրած դառն վիշտերը պիտի մեղմանան ու փարատուին այս վարձատրութեան վրայ, և հանգիստ սրտով ու հանգարա խղճմտանօք կ'երթայ իդմիր իր սիրելի ժողովրդեան քով, որ ակնապիշ նորին սրբազնութեան կ'ըսպասէ. և կը վայելէ իր ծերութեան օրերը, ապագային թողլով ամէն բան, որ պատմութեան անաչառ ատեանին մէջ դնէ :

Կը մագթենք երկար օրեր որ այս շնորհը վայելէ և օրհնէ թէ զկայսերական կառավարութիւնը, և թէ ազգը, որ սկզբնապատճառն է այս վարձատրութեան և շնորհաց :

Իզմիտի պատրիարքական փոխանորդ Նիկողայոս եպիսկոպոսի վըրայ երկուշարթի օրը հրատարակուած նամակն ընթերցողք խնայան թէ յիշեալ եպիսկոպոսը իշմէի նորահաստատ գիւղին մէջ դանուած օծեալ և օծութիւնը վկայուած սուրբ վէմն անար

դեր է և անդոյն քահանային թող չե  
տուեր որ Ս. Պատարազ մատուցանէ,  
և մերձակայ գիւղորէից քահանայնե-  
րուն պատուիրեր է որ զանի չխոտա-  
վանցունեն, և թէ՛ հետևաբար անդ-  
ւոյն ազգայինք կրօնքեն:

Արդ՝ էջմէի պատուարժան ազ-  
գայնոց յիշեալ բազմքն լսելի ըլլալով  
ազգային վարչութենէն, եպիսկոպո-  
սական մասնաժողովն սրտերէ որ՝ անդ-  
ւոյն քահանայն ազատ ըլլայ նոյն վի-  
մին վրայ Ս. Պատարազ մատուցանե-  
լու, անշուշտ ստուգելով թէ վէմն  
արդարև օծեալ է, և Նիկիոպոս ե-  
պիսկոպոսը անիրաւութիւն ըրած է՝  
քահանայն արգիլելուն և գիւղայիքն  
Ս. Պատարազէ զրկելուն պատճառաւ:

Ահա այսպէս հաստատուած կր-  
ւոյ Նիկիոպոս եպիսկոպոսի վրայ ե-  
լած անբաստանութեանց մէկը: Ե-  
րանի թէ միւսներն ալ այս կարգը  
չանցնէին:

Մերձակայ գիւղերու քահանա-  
կոց հրաման գրուեր է որ էջմէի քա-  
հանայն խոտովանցունեն:

Մերատիպէն գրուած նամակի  
մը մէջ հետևեալը կկարդանք մեծա-  
ցուով:

« Բարաքէն Զ օրուան ճամբու չափ  
հետի Չեքնի գիւղէն տաճիկ մը ասկէց  
6—7 ամիս յառաջ գիւղին մտերը  
սպանեալ գտնուեր է: Այս սպանու-  
թեան հեղինակը հաղիս ԱՅ տարեկան  
սպայ մը կարծուելով, անդոյն մի-  
տիբին կայմանէ սասաիկ կշարժարուի  
և գմենոց կերպի կզանակածուի, որ-  
պէս զի խոտովանի թէ ինքն է սպան-  
նայր: Այս անկող արգիւնք մը չու-

նենայով, Մերատակա կրերուի: Ան-  
կէց մինչև հիմայ հոն քննութեան են  
թարկուած է:

« Հիսա բոլոր քաղաքիս քրիստո-  
նէից խօտակցութեան նիւթ եղած է  
այս խնդիրը: Բոլոր քրիստոնեայք կը  
չանան որ անաչառ քննութիւն ըլլայ,  
և Հայ սպան անմեղութիւնը՝ որ կը  
կարծուի հաստատուի: Իսկ մեր փոխ  
առաջնորդը—Պետրոս վարդապետը  
բոլորովին անհող կիւնայ այս մասին  
ալ: Իբնէ կիւնդրուի որ պէտք եղած  
միջոցն ի գործ դնէ, սակայն նա բա-  
ցարձակապէս կմտածէ, մինչդեռ իւր  
պաշտօնը իրաւունք կուտայ իրեն՝  
միջնորդութիւն ընել կառավարու-  
թեան քով»:

Իրատուութիւն ընել պէտք է Պե-  
րոս վարդապետին գեմ եղած այս ամ-  
բաստանութեան վրայ: Ի հարկէ ա-  
մեն. Տեղապահ հայրն և խառն ժո-  
ղովը դիտեն թէ ինչ ընելու է, եթէ  
կրու է դրուածը:

Դատաստանական խորհուրդը  
իւր մէջէն Արապեան մեծ. Մարդխո-  
տան՝ ասենապետ, և Սամաթիոյ  
արժ. Տ. Արիատակէս քահանայն ա-  
տենազպիր ընտրեր է գաղտնի քուէ-  
արկութեամբ:

—Այս շարժու Պատրիարքարա-  
նէն պատուեր գայեր է Տիգրանեան  
Մկրտիչ եպիսկոպոսին, որ աղքային  
ներէ նուէր հաւաքելու գործողու-  
թիւնը գաղտնեցունելով այսօր խառն  
ժողովոյն ներկայանայ:

Կյուսակք թէ՛ այսօր հրաման  
կըլլայ յիշեալ նորագտակ եպիսկո-  
պոսին, որ Պօլսէն ելնելով իւր վիճա-

կը երթայ և իւր եպիսկոպոսական օրհնութիւնները մատուցանէ վիճակայնոց :

— Չորեքշաբթի օրը եպիսկոպոսական մասնատուութիւն ներկայ չեն գտնուեր Նարայէեան խորհն և կապուտիկեան Յովհաննէս եպիսկոպոսունք : — Արդեօք աւելի կարենոք գործ մ'ունենին :

— Ամեն . Տեղապահ սրբազանը առաջիկայ կիրակէ օրը Գումրակուի մայրեկեղեցւոյ մէջ քահանայական ձեռնադրութիւն մը պիտի ընէ :

Թեքիրտապի առաջնորդ գերթադէս արքեպիսկոպոսն ալ նոյն օրը էյուպի եկեղեցւոյն մէջ քահանայ պիտի ձեռնադրէ մէկը :

— Իսառն ժողովոյ որոշմամբ պիտի գրուի բոլոր գաւառաց առաջնորդաց , որ առանց դիտութեան Պատրիարքարանի իրենց վիճակը ձգելով մայրաքաղաքս չգան : Փափաքելիէ որ այս որոշումը գործադրուի , որովհետև ոչինչ պատճառներով առաջնորդաց իրենց վիճակէն զտուելը քիչ վնասակար չլըար ժողովրդեան :

ԽՅՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ առտու կրիակէն դարձաւ զրահաւոր Ֆրքաթոն մը խել մը գինուորներ բերելով հետը :

— Մայրաքաղաքիս Լա թիւրքիւր լաղրոյն ըսածին նայելով Միթհատ փաշա յառաջիկայ կիրակէ ճամբայ պիտի ելլէ իւր պաշտօնատեղին երթալու :

— Իսնուբեան կառախարութեան կեդրոնական միթէսարքի անուանեցաւ Սէլանիկի կառախարութեան

նախորդ մէքիթուպէի Թահսին էֆէնտի :

— Կրտսի թէ՛ վսեմ . Հալիլ փաշա իւր աղջիկը Ջէրքէզ Հաֆըզ փաշայի որդւոյն հետ պիտի ամուսնացընէ , որ կայսերական բանակին մէջ գինուորական պաշտօնակալ մ'է :

— Մայրաքաղաքիս անդրիական դեսպանը մասնաւոր հեռագիր մը ընդուներ է , որովհհանմատուի թէ Մեդլիկայ թագաժառանգ իշխանը և իշխանուհին ամուսն 18—30ին մայրաքաղաքս պիտի հասնին :

— Խօսք կայ թէ՛ Բերայի սատիկանութեան պաշտօնատուներ աւելի ընդարձակ տեղ մը փոխադրելու համար , սատիկանութեան ժողովը խել մը կալուածատէրներու հետ սակարկութիւն ընելու ետեէ է :

— Աթէնքի օսմանեան դեսպան Թօթիատէս պէյը , իւր բոլոր մարդերովը , չորեքշաբթի օրը դադարեցան չագենաւով մայրաքաղաքիս ճամբայ ելաւ դէպ ի իւր պաշտօնատեղին :

— Էյուսայտի որ վաղը Յունաստանէն մայրաքաղաքս կհասնի Պ. Գալէքէի անուն անձն , որ փոխանորդաբար հեղին դեսպանի պաշտօն պիտի վարէ եզեր , մինչև նորրմակը դեսպանին դալը , որուն ո՛վ ըլլալը տուկուին շտապուեցաւ : Մինչև հիմա շատ անուններ բռնեցան : Երէկ ալ լաւ ելաւ թէ՛ Փարսիդի հեղինական դեսպան Պ. Բանկուպէ մայրաքաղաքս պիտի փոխադրուի :

— Պաքիէլէն լաւ կառան թէ այն բոլորնային որ Բաւմանիոյ ահալութեան վրայ սուտ լաւրեր հաղորդե-

լուն համար Ռուսներից հողերէն ար-  
աւքսուելու գաւառապարտուած էր,  
գործը տեսնուելով՝ կրկին Պուքրէշ  
գաւառապարտ արտօնութիւն ընդունե-  
ր է :

—Փարիզի մէկ լրագիրը կհաստա-  
տէ թէ Գաղղիա և Պելճիգա միարան  
համաձայներ են լիւքսէմպուրի եր-  
կաթուղեաց նկատմամբ ծագած գըթ-  
տութիւնը գորհացուցիչ կերպիւ լուծ-  
ուելուն :

—Վաշինկթընէն լուր կուտան թէ  
Քուար կղզւոյն անկախութիւնը վա-  
ւերացնող որոշումը ձերակցութիւն ներ-  
կայացուեր և արտաքին գործոց մաս-  
նաժողովին զրկուեր է :

—Բրուսիոյ զլխաւոր պաշտօնեայ  
կան Պիզմարգ միշտ անձնական տը-  
կարութիւն ունի, և վերջին օրերս  
ստիպուեր է իւր սենեակէն դուրս չել-  
նելու :

—Էթանտար լրագիրն մէջ այսպէս  
կկարդամք :

«Փարիզի գեոպանաժողովոյն դոյ-  
ուելէն ի վեր Բրուսիոյ և Ռուսիոյ մէջ  
նշանաւոր պաղութիւն մը տիրել ըս-  
կրամ է, որ հեղհեռէ շատնալու  
վրայ է, քանի որ Պէրլինի խորհրդա-  
րանը Գաղղիոյ հետ յարաբերութիւ-  
նը կաւելցնէ: Եթէ ստայգ է լաւձնին՝  
Ֆրանքո—բրոսսիան գաշնագրու-  
թիւն մը հաստատելու ետեւէ եղած է  
կան Պիզմարգ: Յիշեալ կունը ան-  
շուշտ խորհած է թէ թշնամին յաղ-  
թելու համար անոր բարեկամ ըլլա-  
լէն զատ ուրիշ ճամբայ չկայ: Թերևս  
այս պատճառաւ ըլլալու է որ տարա-  
ձայնութիւն մը ելաւ թէ կան Պիզ-  
մարգ Նաբոլէոն կայսեր նամակ գրած

է, և թէ բրուսիական գեոպանին Գաղ-  
ղիոյ կայսեր հետ ըրած տեսութիւն-  
ներն այս բանիս համար եղած ըլլան :

—Մինչև հիմայ Ռուսիոյ տէրու-  
թիւնը գոհ կըլլար օրադրաց միջոցաւ  
կամ առանձնակի հրատարակել իւր  
քաղաքական գրութիւնները: Սակայն  
Բեդերսպուրկէն գրուած նամակնե-  
րէն կիմանանք թէ եւրոպացի տէրու-  
թեանց օրինակին հետեւելով մասնա-  
ւոր գրքով մը պիտի հրատարակէ այս  
տեսակ գրութիւնները, որոնք յիշեալ  
տէրութեան քաղաքականութիւնը  
կրնան ճանչցնել :

—Անցեալ երեքշաբթի երեկոյ յարդի  
նաւ մը Գատըրիւզ կուգայ, որուն մէջ  
խել մը գողեր դանուելով, կուզեն եղեր  
որ իրենց արուեստը այս կողմերս ալ ի  
գործ դնեն: Աստիկանութիւնը մասնաւոր  
հեռադրէ իմացած ըլլալով սոյն եղելու-  
թիւնը՝ անմիջապէս ձերբակալ կընէ բո-  
լոր չարագործները :

—Վերջին օրերուս մէջ մշեցի հայ  
մը նոյնպէս Պէոյիւքոտրէցի նաւավար մը  
Բէֆ: անուէ բռնուած՝ յանկարծ իրենց  
անկողնէն ցատկելով կերթան ծովը կը  
նետուին: Առաջինը բարեբաղդաբար կա-  
զատուի. սակայն վերջինը կիսեղուի:  
Աս վերջինին համար կպատմեն թէ իւր  
եղբօրը քովէն փախեր է դիչեր ատեն,  
երբ նա երեք դիչեր հիւանդին քով սպա-  
սած ըլլալով չէ կրցեր գիմանալ քունի  
և քնանալ սկսեր է :

Պօլին Չաղմաղ ճըլլար—եօգուշու  
Ձիւմպիլուլիւ խանին տակ Պ. Գալվաֆ-  
եանի գրատունը ամեն տեսակ գրքեր  
աժան գնով կձախուին :

ՏԵՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ  
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՒՐՔՅԵԱՆ